932 Բարի լուր լսվեց ձայնով Տիրոջ հրեշտակների

1. Բարի լուր լսվեց ձայնով Տիրոջ հրեշտակների
Երբ ծնվեց Արքան մեր՝ Փրկիչը աշխարհի,
Ցնծություն, բժշկություն բերեց մեր սրտերին
Ալֆան և Օմեղան՝ կենդանի Աստծո Որդին:

Ալելուիա՛, երգենք օվսաննա,
Երկրպագենք Նրան և բարձրացնենք փառքեր,
Բյուր ալելուիա՛, երգենք օվսաննա,
Թող խոնարհվեն Նրա առջև բոլոր ազգեր:

2. Բեթլեհեմ, փոքրիկ քաղաք, դարձար մեծ բոլորից,
Երբ ծնվեց Մեսիան, Արքան՝ Դավթի ցեղից,
Ցնծացեք, Երուսաղեմ, մարդիկ՝ երկիր ծայրից,
Նոր երգ երգենք. եկավ Նա, որ առյուծն է Հուդայի:

3. Թող լսի և իմանա ամեն մարդ աշխարհի,
Միակ մեր փրկությունն է, ճամփան է ճշմարիտ,
Նա մորթված Գառնուկն է՝ փառավոր նստած գահին,
Նա է սկիզբն ու վերջը, Նա է կյանքը երկնային: